



**YEREVAN STATE UNIVERSITY
ENGLISH PHILOLOGY CHAIR**

ARMENIAN ASSOCIATION FOR THE STUDY OF ENGLISH

**LANGUAGE AND LITERATURE IN
THE CONTEMPORARY PARADIGM
OF SCIENTIFIC KNOWLEDGE**

SCIENTIFIC JOURNAL

9

Yerevan
“Lusakn”
2018

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ԼԵԶՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԳԻՏԱԿԱՆ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

9

Երևան
«Լուսակն»
2018

Հանդեսը հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
The Journal is published by the decision of YSU Scientific Council

Գլխավոր խմբագիր՝ Ս. Գասպարյան, բ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ քրթակից անդամ,
ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ

Խմբագրական խորհուրդ՝

Ս. Տեր-Մինասովա, բ.գ.դ., պրոֆ.

Ա. Ջորջի, բ.գ.դ., պրոֆ.

Ս. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Լ. Մաթևոսյան, բ.գ.դ., պրոֆ.

Ն. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Շ. Պարոնյան, բ.գ.դ., պրոֆ.

Գ. Մուրադյան, բ.գ.դ., դոց.

Գ. Հարությունյան, բ.գ.թ., դոց.

Լ. Կարապետյան, դոց. (պատասխ. քարտուղար)

Գ. Մադոյան, բ.գ.թ.

Editor-in –chief: S. Gasparyan, Doctor of Sciences (Philology), Prof., Corresponding
Member of RA NAS, Honoured Scientist of RA

Editorial Board:

S. Ter-Minasova, Doctor of Sciences (Philology), Prof.

A. Giorgi, Doctor of Philology, Prof.

S. Haroutyunian, Doctor of Philology, Prof.

L. Matevosyan, Doctor of Sciences (Philology), Prof.

Sh. Paronyan, Doctor of Sciences (Philology), Prof.

N. Haroutyunyan, Doctor of Sciences (Philology), Prof.

G. Muradyan, Doctor of Sciences (Philology), Associate Prof.

G. Haroutyunyan, Doctor of Philology, Associate Prof..

L. Karapetyan, Associate Prof. (executive Secretary)

G. Madoyan, Doctor of Philology

Լեզուն եվ գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում:
Գիտ. հանդես. – Եր.: Լուսակն, 2018. - 212 էջ. *Հանդեսը ընդգրկում է բանասիրա-
կան գիտելիքի հինգ հիմնական բնագավառ՝ լեզվաբանություն, լեզու. ու մշակույթ,
թարգմանաբանություն, գրականագիտություն, նաև դասավանդման մեթոդիկա:*

Language and Literature in the Contemporary Paradigm of Scientific Knowledge.
Scientific Journal. – Yerevan: Lusakn, 2018. - 212 p. *The Journal covers five basic
spheres of philological knowledge: Linguistics, Language and Culture, Translation
Studies, Literature Studies, as well as Language Methodology.*

© Ս. Գասպարյան, 2018 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ..... 8	
<i>Նաիրա Մկրյան</i>	
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՍՏԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ 15	
<i>Աննա Կնյազյան</i>	
ԳԻՏԱՖԱՆԱՍՏԻԿԱՅԻ ՍԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 25	
<i>Գայանե Մուրադյան</i>	
ԲՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԿԶԲԱՂԱԲՑՈՒՐ..... 32	
<i>Ալինա Պետրոսյան</i>	
ԼՍՏԻՆԵՐԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ 40	
<i>Արմենուհի Մարտիրոսյան, Մարինե Մկրտչյան</i>	
ԳՈՎԱԶԴԻ՝ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԷԹՆՈՄՇՆԱԿՈՒԹՅԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 47	
<i>Ռուզաննա Առաքելյան, Գոհար Հարությունյան</i>	
ԵԶՐՈՒՅԹԻ ԵՎ ԲԱՌԻ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆ ՈՒ ԴԻԱՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 54	
<i>Հասմիկ Ղաջոյան</i>	
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ՀԻՆԳ ՀՈԼՈՎԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՃՇԳՐԻՑ ԼԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԵՂԱՆԱԿ 63	
<i>Աստղիկ Մխիթարյան</i>	
ԽՈՍՔԱՅԻՆ ԼԵՐԳՈՐԾՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԱՌՑԱՆՑ ԳՈՎԱԶՂԱՅԻՆ ՄԵԴԻԱՏԵՔՍՏԵՐՈՒՄ..... 69	
<i>Համլետ Առաքելյան</i>	
ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՍՏԱԿԱՐԳՈՒՄԸ ԺԱՍՏԱՆԱԿԱԿԻՑ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ, ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ 76	
<i>Մարիամ Գևորգյան</i>	
ԳՈՑԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ..... 88	
<i>Միրարփի Կարապետյան</i>	
ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 97	
<i>Նարե Զորանյան</i>	

ՖԵՆՈՐՁԻ ՈՃԱԺԱՆՐԱՅԻՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՔԻՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	103
<i>Անի Տեր-Պետրոսյան</i>	

THE FUNCTIONAL INTERPRETATION OF OK? IN ACADEMIC DISCOURSE	111
<i>Nare Hakobyan</i>	

ЯЗЫКОВАЯ САМОИДЕНТИФИКАЦИЯ ГОВОРЯЩЕГО	123
<i>Марика Тонян</i>	

ԼԵԶՈՒ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՇՈՏԼԱՆԴԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ	132
<i>Մարիանա Մարգարյան</i>	

ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ ԼԵԶՈՒ	146
<i>Հասմիկ Մկրտչյան</i>	

COMPARATIVE ANALYSIS OF THE PROVERBS WITH THE CONCEPT WOMAN IN ENGLISH AND ARMENIAN	153
<i>Jemma Militonyan</i>	

ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱՎՈՐ և ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ	164
<i>Նարե Զաբաղյան</i>	

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԵՂԱՎՈՐ-ԱՆՄԵՂ ԵՐԿԱՏՈՒՄԸ Զ. ԶՈՅՄԻ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՎԵՍՍԱԳԵՏԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ» ՎԵՊՈՒՄ	172
<i>Արեգա Համբարձումյան</i>	

НЕКОТОРЫЕ ПСИХОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ МАЛОЙ ПРОЗЫ Р.Л. СТИВЕНСОНА	179
<i>Наталья Гончар-Ханджян, Анаит Акопян</i>	

ТЕМА СМЕРТНОЙ КАЗНИ В РОМАНЕ Т.КАПОТЕ ХЛАДНОКРОВНОЕ УБИЙСТВО	188
<i>Наре Мкртчян</i>	

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՈՍԱԶՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԴԻԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ	200
<i>Մարիամ Առաքելյան</i>	

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Նաիրա Մկրյան

Երևանի պետական համալսարան

Տարածությունը և ժամանակը գոյության հիմնական ֆիզիկական չափումներն են, որոնց ուսումնասիրությամբ զբաղվել և զբաղվում են գիտության ամենատարբեր ճյուղերը: Լեզվաբանության ուսումնասիրության շրջանակներում հատուկ կարևորություն է ստանում մարդու կողմից այդ չափումների ընկալման և լեզվական վերարտադրման խնդիրը:

Մույն հոդվածում փորձ է արված ուսումնասիրել տարածական իմաստի փոխաբերականացման առանձնահատկությունները՝ փոխաբերությունը դիտարկելով ոչ թե որպես ոճական հնար, այլ որպես մարդու կողմից շրջապատող աշխարհի ճանաչման և նրա հետ փոխներգործության արդյունք:

Բանալի բառեր. *տարածականություն, փոխաբերական իմաստ, փոխաբերականացում, ճանաչողական լեզվաբանություն, արտահայտչամիջոց, աշխարհընկալում, աղբյուր-ոլորտ, թիրախ-ոլորտ, դարձվածաբանական միավոր, տարածական իմաստի վերացարկում:*

Ներածություն

Տարածական հարաբերությունների ընկալումը մեծ տեղ է զբաղեցնում մարդու ճանաչողական գործունեության մեջ: Այն իր կնիքն է դնում մարդու գիտակցության վրա, քանի որ նրանով են պայմանավորվում մարդու կողմից արտաքին աշխարհի ընկալման մեխանիզմները: Մարդու ցանկացած գործունեություն և կյանքն՝ առհասարակ, գոյություն ունի որոշակի ֆիզիկական չափումների մեջ, որոնց գիտակցմամբ նա ընկալում և իմաստավորում է շրջապատող աշխարհը: Ըստ որում՝ անհատը նախ ճանաչում է իրեն շրջապատող ֆիզիկական աշխարհը, այնուհետև վերաիմաստավորում է իր ընկալումները: Այս վերաիմաստավորման արդյունքում տարածական հատկանիշները ենթարկվում են որոշակի վերացարկման, փոխաբերականացման: Այսպիսով, տարածական հասկացությունները տեղափոխվում են ոչ-տարածական երևույթների վրա, օրինակ՝ մարդու հուզական աշխարհի, հասարակական-քաղաքական գործունեության վրա և այլն:

Մեր հոդվածում փորձել ենք ուսումնասիրել տարածականության փոխաբերականացման մեխանիզմները, տարածականության ընկալման փոփոխությունները համատեքստում և նրանից դուրս, տարածականության վերացարկման առանձնահատկությունները դարձվածաբանական միավորներում:

Փոխաբերությունը՝ որպես աշխարհընկալման և աշխարհաճանաչման միջոց

Լեզվաբանական գրականության մեջ կարելի է գտնել փոխաբերության և նրա գործառնությունների տարաբնույթ մեկնաբանություններ՝ սկսած նրանից, որ փոխաբերությունը դիտարկվում է որպես զուտ լեզվական արտահայտչամիջոց, մինչև այն, որ փոխաբերությունը մարդու կողմից աշխարհի ճանաչման գործիք է և գիտակցության ձևավորման միջոց:

Այսօր ավելի ու ավելի հաճախ անցում է կատարվում լեզվի նկատմամբ կառուցվածքային մոտեցումներից դեպի գործառական և ճանաչողական մոտեցումները, և հետևյալ երկու ձևակերպումներն ակնհայտ կերպով ցուցադրում են այդ անցումը. «Փոխաբերականացումը բառի իմաստային ծավալի լայնացումն է նրա մեջ հայտնվող այլ իմաստների հաշվին՝ նրա արտահայտչական հատկանիշների ուժգնացման նպատակով» (Ахманова 1966:232): «Մեր առօրյա հասկացական համակարգն, ըստ էության, հիմնվում է լեզվական տվյալների վրա: Լեզվի շնորհիվ է նաև, որ մեզ հասու են փոխաբերությունները, որոնք ձևավորում են մեր ընկալումները, մեր մտածողությունը և մեր գործողությունները» (Лакотф, Джонсон 2004:388): Այսպիսով՝ լեզվական միջոց լինելուց փոխաբերությունը դառնում է մտածողության և աշխարհընկալման ձև, այսինքն՝ դիտարկվում է որպես հասկացությային երևույթ: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս տեսնել մարդու տեղը, մարդկային գործոնը լեզվում և աշխարհի պատկերը՝ արտացոլված լեզվի կառուցվածքում:

Հատուկ կարևորություն է ստանում մարդկային փորձը, որը ձևավորում է հասկացական համակարգի կարևոր մասը: Ուստի մեր հետազոտության շրջանակներում անհրաժեշտ ենք համարել ուսումնասիրել մարդու կողմից տարածականության ընկալման և լեզվական վերարտադրման խնդիրը, քանի որ տարածականությունը մարդկային գործունեության և առհասարակ գոյության հիմնական կարգերից մեկն է:

Օ.Պ. Երմակովան իրավացիորեն նշում է, որ անհատը նախ սովորում է կողմնորոշվել իրեն շրջապատող իրական տարածության մեջ, այնուհետև անցնում ավելի բարձր աստիճանի՝ փոխաբերական, հոգևոր տարածության ճանաչմանը (Ермакова 2000:289-290): Ըստ այդմ՝ տարածական հարաբերությունների ուսումնասիրության շրջանակներում հեղինակն անհրաժեշտ է համարում առանձնացնել տարածականության երեք հիմնական մակարդակ.

- ա) ֆիզիկական տարածություն, այսինքն՝ անհատին շրջապատող աշխարհը
- բ) անհատին շրջապատող հասարակական-մշակութային աշխարհը
- գ) անհատի ներքին հոգեկան աշխարհը:

Ակնհայտ է, որ այս դասակարգման առաջին կետը ենթադրում է տարածականության ուղիղ իմաստ, իսկ հաջորդ երկուսը՝ փոխաբերական: Քանի որ ցանկացած փոխաբերական իմաստի հիմքում այս կամ այն չափով ընկած է լեզվական միավորի ուղիղ իմաստը, ապա կարող ենք ասել, որ տարածականության երկրորդ և երրորդ մակարդակները հիմնված են առաջինի վրա:

Դասական լեզվաբանության շրջանակներում փոխաբերությունն ընդունված է դիտարկել որպես լեզվական արտահայտչամիջոց, ոճական հնարք: Մակայն տարածականության փոխաբերականացումը միշտ չէ, որ հանգեցնում է լեզվական միավորի արտահայտչականության ուժգնացմանը: Ճանաչողական լեզվաբա-

նության հիմնադիրներ Ջ. Լակոֆֆի և Մ. Ջոնսոնի պնդմամբ՝ փոխաբերությունը միայն ռճական-գեղարվեստական հնարք չէ, այլ մեր առօրյա կյանքի անբակտելի մասը: Ճանաչողական լեզվաբանության հիմքում ընկած է այն դրույթը, որ փոխաբերականացման գործընթացը խարսխվում է այն գիտելիքների մշակման վրա, որոնք ձեռք են բերվում շրջապատող աշխարհի հետ մարդու փոխներգործության շնորհիվ (Лаккофф, Джонсон 2004:381): Մեր հետազոտության արդյունքում այս դրույթի ցայտուն օրինակներ գտել ենք հատկապես հասարակական-քաղաքական բառապաշարում: Այսպես՝ *niche, lobby* գոյականները ժամանակի ընթացքում սկսել են գործածվել փոխաբերական իմաստով, սակայն դրանք չեն կարող համարվել ռճապես երանգավորված. *niche* – 1. *shallow recess in a wall to contain statue, vase, etc;* 2. *place destined or suitable for person's occupation;* 3. *appropriate combination of conditions for a species to thrive.* *lobby* – 1. *porch, ante-room, entrance-hall, corridor;* 2. *body of those who lobby, solicit support (of influential person)* (The Concise Oxford Dictionary): Ինչպես կարելի է տեսնել օրինակներում, տրված բառերի առաջին իմաստներն ուղիղ իմաստներն են, իսկ դրանց հաջորդողները՝ վերացարկված, փոխաբերականացված: Այսպիսով՝ մեզ համար առավել ընդունելի է փոխաբերականացման հետևյալ սահմանումը. «Փոխաբերականացումը իրականության որևէ օբյեկտ նշող բառի (բառակապակցության, նախադասության) գործածումն է՝ որևէ այլ օբյեկտ (իրադրություն) ներկայացնելու համար, որ հիմնված է նրանց (այդ օբյեկտներին) պայմանականորեն վերագրվող ստորոգական հատկանիշների վրա» (Глазунова 2000:140):

Սա, կարելի է ասել, փոխաբերականացման երևույթի արտաքին կողմն է: Ինչ վերաբերում է խնդրի ներքին, բովանդակային կողմին, ապա ճանաչողական տեսանկյունից՝ փոխաբերությունը մարդկային փորձի մի ոլորտի մակարդակի փոխադրումն է մեկ այլ ոլորտի մակարդակի վրա: Հետևելով Ջ. Լակոֆֆի և Մ. Ջոնսոնին՝ հետազոտողներն այս ոլորտներն անվանում են *աղբյուր-ոլորտ* (source domain) և *թիրախ-ոլորտ* (target domain) (Лаккофф, Джонсон 2004:316): *Աղբյուր-ոլորտը* միշտ կոնկրետ է և ըմբռնելի, մինչդեռ *թիրախ-ոլորտը* վերացական է: Եթե օբյեկտի գտնվելու վայրը մարդու կողմից ընկալվում է նրա զգայարանների միջոցով, ապա զանազան հոգեբանական, զգացական վիճակներում գտնվելը մարդուն տրված չէ ֆիզիկական փորձով: Այստեղ է, որ տարածական հասկացությունները փոխադրվում են ոչ-տարածականների վրա. հոգեվիճակն ընկալվում է որպես գտնվելու վայր, զգեստարան: Օրինակ.

She lay, without a thought in her head, in a happy coma, enjoying the silence and the slim feeling of her body. (Murdoch1979:54)

The Minotaur bounded to and fro in pain and frustration. (Murdoch1979:5)

Perhaps in would be a good thing of Mischa Fox to put it of its misery. (Murdoch1979:31)

Թեպետ տարածականության փոխաբերականացմանն անդրադառնալիս հետազոտողները սովորաբար նշում են հոգեբանական, զգացական վիճակները, տարածական իմաստը, կարծում ենք, կարող է փոխաբերականացվել նաև դրանցից դուրս, ինչպես հետևյալ օրինակներում.

*Annette left the room, closing the door quietly **behind her**.*
(ուղիղ իմաստ) (Murdoch1979:5)

*The most interesting things are always happening **behind one**.*
(փոխաբերական իմաստ) (Murdoch1979:11)

*She crossed the corridor with a skip and a jump, making a tasteful vase of flowers rock **upon its pedestal**.* (ուղիղ իմաստ)
(Murdoch1979:6)

*...but for her husband she would always be **on the pedestal**.*
(փոխաբերական իմաստ) (Maugham1988:201)

Ընդունված կարծիքի համաձայն՝ փոխաբերությունը հիմնվում է համեմատության, նմանության վրա, ինչպես կարելի է տեսնել վերը բերված *niche, pedestal* օբյեկտների կամ որպես գտնվելու վայր ընկալվող հոգեվիճակների օրինակներում: Մակայն Ջ. Մերլը, քննադատելով այս մոտեցումը, գտնում է, որ այն չի պատասխանում մի կարևոր հարցի. իսկ որտեղ են այդ նմանության հիմքերը և ինչպես պետք է դրանք գտնել (Серль 1990:68-70): Ըստ Մերլի՝ փոխաբերությունը կապված է բառային հակադրության և իմաստային փոխազդեցության, այսինքն՝ փոխաբերաբար գործածված բառի կամ արտահայտության և կոնկրետ բառային համատեքստի հետ: Այսպիսով դրվեց փոխաբերության իմաստաբանական տեսության սկիզբը, որին պետք է հետևեին բազմաթիվ հետազոտողներ: Այսպես՝ Մ. Բլեքն առաջ է քաշում իմաստային փոխազդեցության տեսությունը, ըստ որի «Փոխաբերությունը ստեղծում, և ոչ թե արտահայտում է նմանություն: Այն բացահայտում է առարկաների միջև նմանություններ, որոնք համեմատելը մինչև այդ մարդկանց մտքով չէր անցել» (Блэк 1990:169): Հետևյալ օրինակները, կարծում ենք, ցայտուն կերպով ցուցադրում են համատեքստի դերը տարածական իմաստի փոխաբերականացման մեջ.

*As the April wind now did its best to sweep her from the ground, her long legs appeared **in a kaleidoscope** of whirling colours.*
(Murdock1979:11)

*...no money has found its way **into my pocket**.* (Christie1988:316)

*I'm not going to let money come **between me and happiness**.*
(Christie1988:317)

Փաստացի նյութի ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ լեզվական միավորի փոխաբերականացումը կարող է կատարվել լեզվի կամ խոսքի մակարդակում: Այսպես, վերը նշված *lobby, niche* գոյականների փոխաբերական իմաստները վաղուց արդեն ամրագրված են որպես նրանց բառարանային իմաստներ: Մինչդեռ վերջին օրինակներում փոխաբերականացումն արդյունք է բացառապես համատեքստի: Թեպետ պետք է նշել, որ նույնիսկ լեզվի մակարդակում փոխաբերականացված իմաստը առկայացվում է կոնկրետ համատեքստում:

Տարածական իմաստի փոխաբերականացումը դարձվածաբանական միավորներում

Տարածականության իմաստի փոխաբերականացման ցայտուն օրինակներ կարելի է գտնել դարձվածաբանական միավորներում, որոնք մեծ դեր ունեն լեզվակիրների աշխարհընկալման և նրանց կողմից աշխարհի պատկերման գործում: Դարձվածաբանական միավորները հիմնվում են վերաիմաստավորման վրա, որը մարդու կողմից իրականության ճանաչման կարևորագույն միջոցներից մեկն է, և որի վրա հիմնված է ցանկացած փոխաբերություն: Դարձվածաբանական միավորներում տեղ գտած փոխաբերական իմաստները, և այդ միավորներն՝ առհասարակ, մեծապես կապված են լեզվամշակույթի, լեզվակիր հասարակության պատմական զարգացման, նրանում տեղ գտած հասարակական հարաբերությունների հետ:

Տարածականության իմաստի վերացարկման մակարդակը, ինչպես ցույց են տալիս մեր դիտարկումները, կարող է տարբեր լինել դարձվածաբանական միավորներում: Հայտնի է, որ դարձվածաբանական միավորների կարևորագույն հատկանիշներից մեկը նրանց մոտիվացված լինել/չլինելն է: Մոտիվացված դարձվածքներում որոշակի կապ և համապատասխանություն կա ողջ միավորի արտահայտած իմաստի և նրա բաղադրիչների ուղիղ իմաստների միջև, մինչդեռ չմոտիվացված դարձվածքներում այդ կապը բացակայում է, իսկ ավելի ճիշտ՝ շատ թույլ է արտահայտված: Այլ կերպ ասած՝ տարածականության իմաստի վերացարկման, վերաիմաստավորման, փոխաբերականացման աստիճանը տարբեր դարձվածաբանական միավորներում տարբեր է: Հետևյալ օրինակներում գտնում ենք տարածական իմաստի բարձր աստիճանի վերացարկում, փոխաբերականացում, հետևաբար՝ արտահայտչականության առավել բարձր մակարդակ. *in a nutshell – in a few words; straight from the horse’s mouth – directly from the person involved; walk on air – be extremely happy; fly off the handle – suddenly get angry; up in the air – undecided; pay through the nose – pay a lot of money*: Բերվածների կողքին քիչ չեն այնպիսի դարձվածաբանական միավորները, որոնցում տարածականության փոխաբերականացման աստիճանը բավականին ցածր է (ճիշտ չի լինի ասել, որ այն բացակայում է, քանի որ այդ դեպքում գործ կունենայինք բառակապակցությունների, այլ ոչ՝ դարձվածաբանական միավորների հետ). *bring home the bacon – earn the living for one’s family; read between the lines – find the meaning of something unwritten or unsaid but implied; put one’s foot down – object strongly; in the same boat – in the same unpleasant or difficult situation; in the*

limelight – in the center of attention; (go) in one ear and out of the other – pay no attention to what is said:

Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում տարածականության արտահայտումը տարբեր լեզուների դարձվածաբանական միավորներում, քանի որ նման ուսումնասիրությունը կարող է վերհանել տվյալ լեզվամշակույթների շատ առանձնահատկություններ, ինչպես նաև՝ ընդհանրություններ (հմմտ. *go to hell – գնա գրողի ծոցը – иди к черту; read between the lines – կարդալ տողերի արանքում – читать между строк*): Սակայն սա առանձին հետազոտության առարկա է և դուրս է մեր այս հոդվածի շրջանակներից:

Եզրակացություն

Ամփոփելով մեր ուսումնասիրության արդյունքները՝ կարող ենք եզրակացնել, որ փոխաբերությունը տարբեր ժամանակներում և տարբեր հետազոտողների կողմից դիտարկվել է որպես լեզվական արտահայտչամիջոց, որպես մարդկային մտածողության և ճանաչողության արգասիք, որպես աշխարհի պատկերման ձև, որպես մեկ հասկացական համակարգի փոխադրում մեկ այլ հասկացական համակարգի վրա:

Տարածական իմաստի փոխաբերականացումը կարող է կատարվել լեզվի պատմական զարգացման ընթացքում, երբ ընդլայնվում է տվյալ բառային միավորի իմաստային ծավալը և դրա հետևանքով ինչ-որ չափով վերացարկվում, կամ՝ համատեքստի շնորհիվ, երբ լեզվական միավորը տվյալ համատեքստից դուրս բոլորովին զուրկ է փոխաբերական իմաստից:

Տարածական իմաստի փոխաբերականացման ցայտուն օրինակներ են դարձվածաբանական միավորները, որոնցում այն (փոխաբերականացումը) կարող է լինել տարբեր մակարդակի, որով պայմանավորված է դարձվածաբանական միավորի մոտիվացված լինել կամ չլինելը:

Անկախ այս ամբողջ բազմազանությունից՝ կարող ենք ասել, որ տարածական փոխաբերությունը լեզվի հարստացման կարևորագույն միջոց է, որն արդյունք է մարդու կողմից աշխարհի ճանաչման և վերաիմաստավորման:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ахманова, О.С. (1966) *Словарь лингвистических терминов*. М.: Советская энциклопедия.
2. Блэк, М. (1990) *Метафора*. // Теория метафоры. / Сборник под ред. Н.Д. Арутюновой и М.А. Журиной. М.: Прогресс.
3. Глазунова, О.И. (2000) *Логика метафорических преобразований*. СПб: Питер.
4. Ермакова, О.П. (2000) *Пространственные метафоры в русском языке*. // Логический анализ языка. Язык и пространство. М.: Прогресс.
5. Лакофф, Дж.; Джонсон, М. (2004) *Метафоры, которыми мы живем*. М.: Эдиториал.
6. Серль, Дж. (1990) *Метафора*. // Теория метафоры. / Сборник под ред. Н.Д. Арутюновой и М.А. Журиной. М.: Прогресс.

7. McCallum, G. (1978) *More Idiom Drills*. NY, Hagerstown, San Francisco, London: Harper & Row Publishers.
8. (1976) *The Concise Oxford Dictionary of Current English*. / Ed. by J.B. Sykes. Oxford: Clarendon Press.

ԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Murdoch, I. (1979) *The Flight from the Enchanter*. Frogmore: Triad/Panther Books.
2. Christie, A. (1988) *The Case of the Rich Woman*. // English Short Stories of the 20th Century. M.: Raduga Publishers.
3. Maugham, S (1988) *Lord Moundrago*. // English Short Stories of the 20th Century. M.: Raduga Publishers.

Metaphorization of Spatial Meaning in English

The article is an attempt to discuss the various mechanisms of metaphorization of spatial meaning in English. Metaphor is viewed not only as an expressive language means but also as a fundamental mechanism of mind which structures the most basic understandings of an individual. A special emphasis is laid on the role of the context in the creation of the metaphorical meaning. The article deals also with the metaphorization of spatial meaning in phraseological units of the language and the different degrees of its abstraction.

Метафоризация пространственного значения в английском языке

В статье рассматриваются механизмы метафоризации пространственного значения. Метафора представляется не только как стилистический прием, но и как способ восприятия и воспроизведения картины мира. Особо подчеркивается роль контекста в метафоризации различных пространственных значений. Рассматриваются также фразеологические единицы с метафорическим пространственным значением и различные степени абстрагированности этого значения.

Մեր հեղինակները

Ալինա Պետրոսյան – ԵՊԲՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս, ք.գ.թ.
Էլ. հասցե՝ alina.petrosyan@yahoo.com

Անահիտ Հակոբյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝
anahit.hakobyan1988@yandex.ru

Անի Տեր-Պետրոսյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ aniterpetrosyan@ysu.am

Աննա Կնյազյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, ք.գ.դ.
Էլ. հասցե՝ annaknyazyan@ysu.am

Աստղիկ Մխիթարյան – Վաղարշապատի Մ.Գորկու անվան հ.5 ավագ դպրոցի ուսուցչուհի
Էլ. հասցե՝ asto7@rambler.ru

Արեգա Համբարձումյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ orbisenglish@gmail.com

Արմենուհի Մարտիրոսյան – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի ասիստենտ
Էլ. հասցե՝ arm.martirosyan@ysu.am

Գայանե Մուրադյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, ք.գ.դ.
Էլ. հասցե՝ g.murad@ysu.am

Գոհար Հարությունյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.
Էլ. հասցե՝ goharharutyunyan@ysu.am

Համլետ Առաքելյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ hamlet.araqelyan@gmail.com

Հասմիկ Ղաջոյան – ՀԱՊՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ hasmikghajoyan@mail.ru

Հասմիկ Մկրտչյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ hasmikmkrтчyan@ysu.am

Մարիամ Առաքելյան – ՀՊՄՀ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
Էլ. հասցե՝ mariamarakelyan89@mail.ru

Մարիամ Գևորգյան – ԵՊԼՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ miriamgevorgian@gmail.com

Մարիանա Սարգսյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.
Էլ. հասցե՝ marianasargsyan@ysu.am

Մարիկա Տոնյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.
Էլ. հասցե՝ marikatonyan@ysu.am

Մարինե Մկրտչյան – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ m.mkrтчyan@ysu.am

Նաիրա Մկրտչյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.
Էլ. հասցե՝ nairamkryan@ysu.am

Նատալյա Գոնչար-Խանջյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.
Էլ. հասցե՝ natalie.goncharkhanjyan@ysu.am

Նարե Հակոբյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ narekaytser@gmail.com

Նարե Մկրտչյան – Հայ-Ռուսական (Մլավոնական) համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ mkrtchyan.nare@gmail.com

Նարե Չոբանյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ nare.chobanyan@gmail.com

Նարե Ջաբաղյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ narejabaghyan@ysu.am

Ջեմմա Միլիտոնյան – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անգլերեն լեզվի և գականության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ jemmamilitonyan@yandex.com

Ռուզաննա Առաքելյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, Բ.գ.թ.
Էլ. հասցե՝ ruzanna.arakelyan@ysu.am

Միրարփի Կարապետյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս, Բ.գ.թ.
Էլ. հասցե՝ sirarpikarapetyan@ysu.am

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում» գիտական հանդեսը լույս է տեսնում տարին մեկ անգամ: Հանդեսում տպագրվելու համար կարող են ներկայացվել հոդվածներ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով **Sylfaen** տառատեսակով, լուսանցքները՝ 2 սմ, վերնագիրը՝ 14 տառաչափով (աջ կողմում, գլխատառերով, թավատառ), հիմնական տեքստը և ենթավերնագրերը (ձախ կողմում, թավատառ), հեղինակի անուն, ազգանունը (աջ կողմում, թավատառ), աշխատավայրը (աջ կողմում, շեղատառ)՝ 12 տառաչափով, բոլոր տողերի միջև տարածությունը՝ 1.5: Հոդվածին անհրաժեշտ է կցել հայերեն, անգլերեն և ռուսերեն ամփոփագրեր՝ 60-80 բառի սահմաններում, 7-10 բանալի բառեր (հիմնական տեքստի լեզվով), հեղինակի մասին համառոտ տեղեկություն՝ աշխատավայր, կոչում, պաշտոն, էլ. հասցե, հեռախոսահամար (հայերեն):

- Տեքստը բաժանել հետևյալ մասերի՝ ներածություն, ենթաբաժիններ և եզրակացություն:
- Այլ հեղինակների մեջբերումները՝ չակերտների մեջ, որպես տեքստի շարունակություն /եթե կարճ է/ կամ նոր տողից /եթե երկար է/:
- Այլ հեղինակների աշխատությունների վերնագրերը՝ չակերտների մեջ:
- Փաստացի օրինակները՝ շեղատառ, առանց չակերտների: Եթե օրինակները ներկայանում են մեկից ավելի նախադասություններով, առանձնացնել տեքստից՝ վերևում և ներքևում թողնելով մեկական տարածություն: Օրինակի մեջ ուշադրության արժանի բառերը կամ բառախմբերը ներկայացնել թավատառ:
- Տեքստում աղբյուրը ներկայացնել հետևյալ ձևով՝ փակագծերում տալ հեղինակի ազգանունը և հրատարակչության տարեթիվը: Եթե մատնանշվում է էջը՝ տարեթվից հետո դնել հայկական վերջակետ, նշել էջը: Օրինակ՝ (Svartvik 2005) կամ (Bronfen 1992:330):
- Ծանոթագրությունները՝ հոդվածի վերջում, գրականության ցանկից առաջ:
- Գրականության ցանկը ներկայացնել **այբբենական կարգով**՝ խստիվ հետևելով ներքոնշյալ կանոններին՝
հեղինակի ազգանունը, անվանատառերը, (հրատարակման թվականը), աշխատանքի վերնագիրը (շեղատառերով, առանց չակերտների), հրատարակման վայրը, հրատարակչությունը, հայկական վերջակետ:

Օրինակներ՝

- 1.Ջահուկյան, Գ.Բ. (2003) *Շարահյուսական ուսումնասիրություններ*. Երևան: Ստոդիկ հրատարակչություն:
- 2.Eisenstein, E.L. (1979) *The Printing Press as an Agent of Change*. Cambridge: CUP.
- 3.Myer, T. (1997) *The Language of Science*. Available at: <<http://www.sfsite.com>> [Accessed June 2012]
- 4.Redbury, M. (2003) *Language and Discourse*. // Investigations in Linguistics. / Ed. by R.K. Smith. New York: Redgate Inc.
- 5.Svartvik, J. (2005) *A Life in Linguistics*. // The European English Messenger. / Ed. by J.A. Stotesbury. Vol.14 (1). Portugal: Grafica de Coimbra.
- 6.(1998) *Oxford Advanced Learner's Dictionary of Current English*. Oxford: OUP.

- Հոդվածի էլեկտրոնային տարբերակը ուղարկել afajournal@ysu.am էլ. հասցեին:

Հասցե՝ ՀՀ, Երևան-0025, Ալեք Մանուկյան 1,
Երևանի պետական համալսարան
Հեռախոս՝ (+374 60) 710 546
Էլ. հասցե՝ sedagasparyan@ysu.am, afajournal@ysu.am

«ԳԵՎՈՐԳ - ՅՐԱՅՐ» ՍՊԸ



Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ (011) - 52.79.74, 055-52.79.74
Էլ. փոստ lusakn@rambler.ru